


կամաւորապէս զրկողութեան ենթարկելով իրենք իրենց, քանի որ լեռների անբերրի և ցուրտ բարձունքներում հողի մշակութիւնը խիստ սուղ հատուցանելով հողագործին, ոչ ոք պիտի համաձայնէր լեռները բարձրանալ նրանով զբաղուելու, իր ետեւում թողնելով Շիրակն ու Արարատեան դաշտը: Մեր յետագայ տեղեկութիւնները Հաքում հարցոց մասին հաստատում են կամաւոր գաղթի միտքը. դոքա ևն Սիւնիքի ազատագէր ժողովրդի մի բեկորը, որ ինքնակամ կերպով թողել է իր հայրենիքը և լեռները քաշուել, տարածելով այնտեղ իր խաղաղ երկրագործական զբաղմունքը:

ԳՐ ՏԵՐ ՊՈԴՍԵԱՆ

Շարունակելի



ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ.

Գրիգոր Եղբայակի մի նամակը Յովհաննէս Կոլոսին. — Վերհագրի մէջ յիշուած երկու անձնաւորութիւնն էլ ժԸ. դարու առաջին քառորդի նշանաւորագոյն դէմքերն են արեւմտեան Հայոց մէջ: Թէպէտ նոքա ծագումով արեւելից են, կրթուած Վարդան Բաղիշեցու ձեռքի տակ, պաշտօնավարած Մշոյ Ս. Կարապետի վանքում, ծանօթ բնիկ երկրի հայ ժողովրդի կրօնական և եկեղեցական պահանջներին, բայց նրանց գործունէութիւնը բնորոշ գոյն ու կերպարանք է ստացել արեւմուտքում, մէկն իբրեւ Կ. Պօլսոյ և միւսը Երուսաղէմի պատրիարք: Յովհաննէս Կոլոսը յանձին Տ. Բաբգէն վարդապետ (այժմ եպիսկոպոս) Կիւլէսէրեանի ունի իւր կենսագրողը*, բայց Գրիգոր շղթայակիրը իւր գործունէութեան լրութեամբ դեռ ևս անյայտ է կամ քիչ յայտնի հայ բանասիրութեան. մինչդեռ Երուսաղէմի աթոռի բարեկարգութեան պատմութեան մէջ նա այնպիսի մեծ դեր է կատարել, որ արժանի է յատուկ ուշադրութեան: Աւանդութիւնը աւելի վառ յիշողութիւններ է թողել Երուսաղէմի միաբանութեան մէջ, քան բանասիրութիւնը: Գրիգոր Պարոնտէր և Գրիգոր Շղթայակիր Երուսաղէմի աթոռի պատմութեան ամենայայտնի դէմքերն են: Շրջաթայակիրն է մասամբ հաւաքել և կարգաւորել Երուսաղէմի մատենադարանն ու թանգարանը, կալուածական խնդիրները, միաբանական կեանքը, վանքն ազատել ծանր պարտքերից և ընչաքաղց ու յափշտակող մարդկանց ձեռքից, տաճարը զարդարել անօթնեւրով և բազմաթիւ նկարներով, որոնցից շատերը գեղարուեստա-

* Կոլոս Յովհաննէս Պատրիարք Վիեննա. 1904:

կան արժէք ունեցող, ժամանակի տաղանդաւոր Տիրացու Յովհանն Զնէսի ձեռքով նկարուած*։

Գրիգոր Շղթայակերի գործակիցն էր Երուսաղէմում Հաննա պատմագիրը, որպէս վեֆիլ կամ աթոռակալ պատրիարքի, 1720—1733 թ.**։ Նորա մահուան առթիւ էլ գրուած է այս նամակը, ծերունի պատրիարքի դէպի իւր հոգևոր որդին ու գործակիցն ունեցած սիրոյ և վստահութեան, ինչպէս և դէպի Կոլոտ ռենեցած միակամ և միախորհուրդ եղբայրակցութեան մի գեղեցիկ յայտարարութիւն։ Թէպէտ Շղթայակերը Հաննային շարունակ վարդապետ է անուանում, բայց նա եպիսկոպոս էր ձեռնադրուած 1726 թ. մարտի 1-ին Կարապետ կաթողիկոսից***։ Նա վախճանուեցաւ 1733 թ. յունիսի 11-ին, երկուշաբթի, 12½ տարի Շղթայակերին գործակցելուց յետոյ։

Այս նամակն արտագրել ենք Երուսաղէմի լուսարարապետ Տ. Դաւիթ վարդապետի ժողովածուից, պահելով տպագրութեան մէջ ևս սկզբնագրի առանձնայատկութիւնները՝ նոյն իսկ կէտագրութիւնը։ Ձեռագրերի մէջ, յատկապէս Երուսաղէմի, կան շատ յիշատակարաններ Շղթայակերի անձի և գործունէութեան մասին։ Այդպիսի մի բաւական ընդարձակ գրութիւն «Վարք և պատմութիւն Գրիգոր Շղթայակերի» վերնագրով ձեռքի տակ ունինք մենք, որ արտագրել ենք Երուսաղէմի № 681 Ձ-ից։ Կարևոր աղբիւրներ են նաև նորա ժամանակ պատրաստած նկարների, անօթների և զարդերի արձանագրութիւնները։ Մեր մատենադարանի մի ձեռագրի մէջ Տ. Կարապետ եպիսկոպոս գտել է Շղթայակերի հոգևոր երգերի և տաղերի մի ժողովածու։

Ցանկալի էր այս նշանաւոր մարդու գործն ու կեանքը լիովին յայտնի դառնար հայ բանասիրութեան։

է՛

Տեղ Յովաքնու ԱԺԷՆ վրդպիդ եւ մեծի պսրգիդ
սրտաբեկ անձմբ եւ լալոս աչօք գողջոյնե սի՛ւրջ բնծայեմ

յունիս Լ.

Եւ զայս ինչ յայտ առնեմ մեծութ՛ե քում, զի ի յունիսի ամսս

* Մի այլ տեղ շուտով առիթ կ'ունենանք այս նշանաւոր, բայց մինչեւ այժմ անյայտ նկարչի մասին խօսելու։

** Հաննա պատմագիր. Գ. տպ. 1782. եր. 113 եւ Կոլոտ Յովհ. պատրիարք 457, 459։

*** Կոլոտ Յովհ. պատր. եր. 457։

գրել՝ գիրն, զոր յղեցի ը՛ դօրխմազ ըրգսին՝ ոչ գիտեմ եհն առ քեզ թէ ոչ՝ յորում և գրել՝ էի ի նմ դրօթ մահն սիրածին որդի մերոյ Աթուկ՝ հանճըզ վրդպին իմոյ մօտ (համառօտ?) գրել, և այժմ զնոյն գուժ, զի յունիսի ժա յըջթի օրն ի տօնի ներսիսի սըյ Հյրպին մերոյ մեծի ի մեծան ժմն նստել ի խցնակս միամիտ զգիրն զայն գրէի ի վերջն հսել գրոյն՝ յայնժմ սպսւր որդին մեր՝ ստիպւի եկն թէ վրդպն կոչէ զքեզ՝ զոր բճմիցս այնպէս լի էր, զոր հապճէպ փութի գնցել իմ առնա՝ իսկ իբրեւ ետս զհէքս իսկոյն աղղկեց փոր իմ փոր իմ պոց և իջլցել յաթոյն յիւր՝ տեղաց վր, և այն ժմն աւնդեց զքաղցր Հոգին իւր ի ձեռն բրի Հրշտկին ա՛յ և իմ ի դողմն և ի հիցմն եղել թլկցել անկայ յերկիր, իսկ զաղէտ զկսկիծ զողբ և զաշխրնս մեր՝ մնէնզ զողբմի մօրն զ կրէ պմել. զհաւուրն և ժմն այնմիկ և զի՞ յերկրցից՝ ի նմին ժմ ի սր եկղցին իջլցք զօրհնել մրմին գեղաղէջ քաղցր որդիս՝ տեսաք սպիտկցել զօրհնել գէմս նր (որպէս) զոյս՝ և հօտ անոյշ բուրէր ի նմէ, և զկրգն սր կտրցք ի վր նր և ը առ՝ ւօտն անրժնս զիս պտրգել չորցել ձեռքս օծի, բայց յահի կայի ի կղմնէ դտրնին՝ զօրնյ մեր որդի գարրիէլ վրդպն՝ գնցել թէրճիմն անմէտ պկիւն առ շնպտնի որդի Ապտվհպս... (ծակը կարկատած) և մեծ եղբրն իւր՝ զբճմ զարտօսր հեղեկ և յետոյ զաղուհն ոչ մոցել նայիպ ապտվհպն վերոյ յիջլն՝ իսկոյն յղեց առ բարեմիտ դտրն զգիր հրմնի թղմն առեկ երեք վրդպն՝ մինչ մեք՝ զկրգն կտրէաք, թարց միոյ փոկղի խստմնն. սէր իմ ած էր յաջ՝ զօղն, այլ նայիպն և անմէտ պէկն գմեծ բրթիս և զլաւութիս ար՝ ին՝ յաւէտ նայիպն ապտվհպ, և զկնի այնմ, բրձլ զօրհնել մրմին որդիս ողբերգէն հաշմբ տարաք ի դիր հնգստեհն ի սրն փրկիչ՝ զոր գրէթէ և քարինք տեղոյն լային, զի ա՛մ ազգք քրստնէից՝ և վէքիք՝ նաև ալազգիք խուռն բճմթր եկին ի թաղումն անդր՝ և այնպէս մեծ և փուրթթ և կսկծգին դառն աղէտիւ իջի ի խոր՝ փիտն և գօսցել բճկօքս գրկել իջլցի ի հող տպնի, զոր ինքն ինձ պրտէր առնել վայ ա. գլխոյս և աշցս՝ ես իւրն աւրի, և եգի հուպ մրմնյ մինսյ մեծի վրդպին և պտրգին՝ և զգիր տպնին գղցկ ետա շինել ըս ըղծիցս՝ որոյ Հգն սր ա՛ծ ողբմի և երկնից լւսմն լուսւրէ, և զքեզ և զմեզ ա՛ծ սր Հոգին մխթրէ, և յիւրէի գի այժմ որդէկորոյս հայրս որոնեմ ի սր վնցս՝ և յոչ գտնելն զցնկին իմ գնամ յօրն մի կմ. բ. անգմ ի սր փրկիչն՝ լամ աղէտիւ ի վր սր տպնի ըղծլս՝ և գամ ուշաթիւն, բայց գհմ գայ՝ զի մի փող հաբիմի ոչ գնց, և հմյն գաժ ողբմին տան.

Իսկ զկնի սր թաղմն ցնկլյս, յորում ի սուգ սգւր ել

նստեալք՝ ի դռներնէն, ի մուսլմէն և յամ մեծամեծօց սէր՝ քղբիս
 զրոյց եկեալ, թէ՛ զո՞րք կ'միս զնեւ վէքիլ, զի մեք ոչ զորք կ'միմք
 լինել, բայց զգորբի էլ վրդպն խնդրեմք զի առնից'ս վէքիլ, և
 ոչ զյակէն կ'մ զայլ ոք, և իմ արտ'սօք ամց'ն զայս պս'խն
 ետու՝ թէ ի ստմ'սլ գիր եմ գրեալ՝ պտ'խն ն'ց զայ՝ և ապա տե-
 սից թէ ո՞վ լինիցի, զի թ'րց պտրդի և իշխ'նց գրոյ և հր'միսի,
 ես զոչինչ իր կ'ընմ առնել աստ. և նոքա այս'ւ ք'նիւս հ'մողե'լ լք
 գն'ցին հ'ւնւթ'բ, և այժմ թէ իր ինչ դիպցի, գ'բրիէլ վրդ'պն,
 և թէրճիմ'ն պ'օղսն խղճց'ել՝ աշկ'րտ առ Գ'ս հնգ'ւցլն՝ զպ'սխն
 տան՝ այլ ոչ վէքիլ ան'ւմբ, որ և զս'բ աջգ հ'մբ'ւրեն լալով,
 և զի խոհեմն այն երն'լին՝ զկտակ իմն ի կենդ'նւթ'ե իւր'ւմ
 զ'րմ'նլի գ'րլ էր, յորում և զայս՝ թէ ի զալաթիոյ նոր'շէն ս'բ
 եկ'ղցին ինձ քոստ'ւնք՝ մի տաս կ'տրել ինձ գ'րլ էր, և զայս ևս
 գ'րլ, թէ բն'ւ գ'րմի կղ'մնէ փող մի չունեմ, բայց մի'յն թ'ղմն
 պշտ'մն գ. խ'ւ. դ'ուշ, և ոչ այլ ինչ, զոր քնթ'րց ի լուր ա'մցուն
 և զարմ'ցն ա'մքին ը'ն նխ'պտրստութի երն'լն, վ'սյ խնդրեմ,
 զի ի մէկ յուխ'տրէ՛ քոս'ւն դ'ուշ փոխ առցես, և ի զլթիոյ ս'բ
 լ'ւսւրիչ եկղցին քն'յից տայցես, զի գ'սբ պտ'րգն, խ'ւ. կտրսցեն
 իմ սիրուն Աթ'ուկ վրդպի հ'գն: Եւ այժմ նա գն'ց զճն'պրհ
 ա'մ մր'դկն և եթ'ղ ինձ զկսկիծ մշտնջ'նկն, յիշ'վ զն'ր զջանն
 զվս'տկն, զսէրն զքղցրութի, և զայս ևս զի այս, Ժ'բ տ'րի և կէս
 ի մի'սին աստ բնկեալ ի մէջ անտն'լի գրծ'յս ոչ յիշեմ թէ օրիկ
 մի զիմ սրտիկն խ'ցլէ՛ կ'մ ը'դէմ պսխնէ՛լ, այլ յա'մի հն'զնդ'
 յ'ամ իր զոր ասէի իւրն՝ և փութ'վ կ'տրդ, զոր կ'րծեմ թէ այսու
 սգովս իջն'լց եմ ի հող, այլ տ'ն կամք օրհնե'լ և փութե'լ լիցի:
 Եւ այժմ սէր իմ, տ'ն փառք գոն մի'րնք ի ս'բ յԱթ'ուս, և յայլ
 մեր վն'րյս. ճ'ծ. ոգիք ը' կը'գւրս և ը' մհ'տսիս սկ'ւ ինչ պկ'ս,
 ես որք մի'միտք զգ'րծս իւրե'նց թէ հ'գր և թէ մար'մուր կտ'րեն
 և զա'ծ օրհնեն, և յոլ'վքն ս'ս հն, գտ'նին ևս որք ի միտս այլ
 և ի լեզուն այլ և սիրտս այլք են, բ'յց ոչ յայտնի յկ'բ վ'րդպն՝
 զկնի վլ'ւն'լց ցնկ'լց ի'մյ ի խուցն մ'տել, յ'ղօթս և ի սեղն'ն
 մի'յն գայ և ոչ ը' ումեք խօսի, և ոչ ի բան կխ'ուսի. և ոչ մեք
 ասեմք՝ թէ ի վ'ր գ'րծյ կաց, և թէ կ'չեմ գայ առ իս և գնայ,
 բայց զսիրտս ամ'ցն տ'ր քննէ. եղբ'յրն մեր Ս'հկ վ'րդպն զքէն
 յոյժ շն'հկ և զմեղ մխ'թրէ յար՝ ս'կ և ինչ մազմնն ծուռ կը մանէ՛
 այլ խեղճն զինչ առնէ՛ իւր զր'ծն այն է զներհկն իմ որդ'յս,
 զմեր չեղ'ծն պետր'ս կրկին յեաֆ'յ յղցի, և զս'բգն աստ բերի,
 յվ'սն ի շ'մյ եկեալ մն'ց աստ՝ և բրկ'մ այլ զգիքն ասեն. թէ մի
 պ'հէք զդա աստ՝ զի ձեզ վն'սէ, և ոչ գ'տեմ թէ օ'ւ յղեցից. յա-
 լուր միում ժղվ'ցի զ'ամ զմի'րնս և ա'սցի ի մէջ ս'բյ եկղ'ցն,
 թէ եղբ'ք, այս. բ'. ամիս ի մէջ ց'ւյ գոլ'վ իմ որդին . (մի բառ)

ցաւն յիմ գլխս էր և յժրութիւն կտրէի զամ գգրծն օգիտէքդ՝
 ալին ունիւլ առջէլ ինձ և այժմ սու եղև, և խաբարս զայս իմ.
 խնդրեմ ի ձէնջ զի օ մինչև ցայժմ էր այս. բ. ամ. բ. ամիս,
 այլուի թող այնպէս մնայ՝ կրկին եւ կը՛ցից զվիշտս՝ զի վս իմ
 մեղցս եղև այս՝ հմբե՛րսցուք մինչև ի մեծ քղքէն գիր դայ. և ամ
 գը՛ծկլ ի վր իւր գրծ՛յն հստաթ թող մնայ հետմութիւն և ընդ այս
 բան՝ հմ՛յնք զհուն՛թի տուե՛լ արձկ՛ցն խղղ՛ւթբ. և զի երկոքինքս
 այս՝ անհշտ թ՛շնմիք են միմե՛նց յկ՛բն և գ՛բրն. արդ՝ թէ հա-
 քիմի, թէ այլ՛զգե՛ց, և թէ մի՛բնից՝ զայս ասցի թէ ի բիւզն՝ դիոյ
 և ի պտ՛րդէն գիր պիտիւր գայ. դու այլ թոյլ չը թ՛ղւա՝ ժ՛ղվեա
 զխ՛րհրդէն մեր բրկ՛ման. և լաւ խրհ՛ղվ իր մի հստացէք և
 զգիրն ծ՛ծուկ ինձ յղ՛ցէք՝ տեսից թէ օ կլինի՝ իսկ թէ դու և
 բրկ՛մք՝ սր՛յ տանս հր՛մյիցէք՝ թէ տունն և բանն քո է՝ մեզ զինչ
 փոյթ, սէր իմ հետա գի բն՝ և բնկն՛ւթիս գն՛ցլ է, և ախ և վախ
 ան՛վ ժամ մի ի տեղ մի ոչ կ՛րեմ հնդրտիլ, զայս գիրս այլ ի
 գըրի գր՛ցի բ՛ղմ հեծծն օք և արտուք. իսկ թէ ասցս՝ թէ անհնր
 է թ՛րց քո կ՛մցն. մեք զոք ոչ կ՛րգեմք այդը վէքիլ ի վ՛ր քո,
 արդ ես յատն՛ցից զխրհրդն իմ. ոհ և ու. վայ իմ գլխոյս. ես զիմ
 ըղձ՝ ի Հաննայն խնդրեմ ինձ Աթ՛ուկլ, և այն սւր է, գն՛ց թռեաւ
 իմ գղցկ՛տս թռչունն յիմ ձեռքս՝ և այլ աստ ոչ գ՛տնմ զնա. բայց
 թէ ի հնդրձն, հեյ ինձ ամ ծոգ՛րմի. եւ որ՛վհտե այս սու եղև
 այլ զառ՛ջնրդ՛ւթին ես զինչ առնեմ, բայց թէ հետայց և ողբցից
 զմեղս իմ և զորդիս՝ իմա զինչ ասեմ վր՛դս՝ ամ քեզ շատ յերկ՛ր
 կեն՛ք տայ՝ այլ ըս ասիցն թէ այս ուղտն յամէնու դուռն կչոգի,
 այս՛ւտե ինձ խ՛րհդ և կ՛մք այլ որիչ ոչ գոյ՝ բայց միայն այս,
 զի գտե՛ղցդ բանն հգ՛սցես՝ յերկ՛ւց զմինն կ՛մ գ՛րւթի կ՛մ
 զյկ՛ր վրդ՛պքն. զո՛վ ոք որ հմ՛յնքն կ՛մին, ի տեղի քո վէքիլ
 ան՛ւմք հոտ՛տացես, և դու աճ՛արեւ աստ ժմեհ՛լ Տան քո տիր՛ւթի
 առնի՛ցս մինչդե՛ռ ժ՛մկս ի ձեռքէ հ՛գա վս այն՛րկ յորդ՛յս
 հիւ՛նդւթի ժմկն զայն գիրն քեզ և ժղվրդե՛ն գ՛րցի. և վս այս՛րկ
 այժմ ամ՛ցւն ասցի թէ ի ստ՛մպլ թռւտ պիտիւր գայ՝ և յիմ
 միտս ոչ գրոյ վս է՝ այլ վս քո բ՛րվ ելե՛լ գ՛յցս մեծ՛ւ պրո՛տութիւն
 տեղոյդ հստաթե՛լաւ, և զայս ի միտ ամ՛*, զի այժմ թէ լուսւրե՛լ
 հոգին առ տ՛ր գն՛ց, ոչ բ՛րին զգլխս՝ իմ կիսկն՛դն գոլ՛վ զ՛ամ
 ոպ՛սն մի ըս միոյէ գ՛րցի քեզ. իսկ թէ հր՛մն ամ՛ հսնէ՝ և օր
 մի ես պ՛րգուայ՝ ով պիտի գրէ քեզ՝ թէ այս սու եղև, և կ՛մ թէ
 մինչև գրեն, և մինչև դու գ՛յցես՝ պտ՛նով զպտ՛նոս, Տանս հալն
 սւր կերթայ հսնի՝ ի սէրն ք՛ի լաւ խ՛րհե՛ց զայդ, և զայս վս
 այն գ՛րցի զի իմ հետա խր՛հդն այս է՝ զի զբան քո հոգ՛ցել

* Աստիւն աւելորդ

լաւ՝ ելե՛լ ա՛վ գայցես ի ս՛ր յէ՛մ, ի ս՛ր տունս քո, զի ես կ՛մ
գնացից կ՛մ առ՛նձնցյց, և այն ևս վ՛ս օգտի քո, և զի ես իմ
կմ՛ւս՝ զանուն որ՛դ իմոյ՝ ի վ՛ր այլոյ ումեք ոչ կ՛րեմ զնել բ՛յց
թէ ի հ՛րկէ և զի թէ՛պ զայս ա՛մ գ՛րցի քեզ՝ սկ՛յն և զայս ևս
գրեմ, զի մի կիս՛տ և շ՛ւտի՜թ զըն՛դ առն՛ցս, որ ա՛ծ չէնէ
յերկ՛ւց կ՛դմն՛ց տեղ՛յդ և տեղ՛յս և մեզ փն՛ս չլինի, թէ՛պ յա-
ջղմն յ՛այ է, զոր տ՛ր ա՛ծ տ՛ցէ քեզ կր՛վթի և բ՛րի յաջղ՛ւմն.
Պետ իմ, ես յիմս կդ՛մնէ՛ ա՛ռջի ա՛յ զա՛մ ստուգ՛ւթք քեզ
առն՛ձին գրեցի, զի զանխուլ ընթերցցիս և ը՛ճմ՛րիտ բրկ՛մցն
մե՛րց զխրհ՛զն բ՛րի առնիջիք՝ և ո՛պ գրէք ինձ այնպ՛ս ա՛վ
առնեմ. թէ՛պ առ՛ջին մր՛զն չեմ այլ զայրէթէ զպրիս՛րն և զաւե-
տիք վրդ՛պսն, չթողուս յուրեք երթ՛լ, այլ ը՛ քեզ բերցես՝ կ՛մ
յղիցս, բ՛յց ը՛ քեզ բերելն լաւգ՛յն է. Ողջ լեր ի տ՛ր զօ՛րցե՛լդ
ա՛վ, ի պ՛րծնս հ՛ղյս սգաւոր գր՛գրի որ ի յուն՛սի. Լ. զգիրս
ցնդե՛լ մտօք գր՛ցի՛՛ ամէն: յոյժ տենչ՛նօք զողջոյն, զ՛այ օրհնութի
և զշն՛րհ ս՛րց տեղե՛ցս ընծ՛յեմ իմ սիր՛ծին որդ՛ցս Յարու՛թի
և Յակոբ հանճար՛շտ վրդպցս, և սիրով և հարկիւ պ՛ւրեմ իմ
որ՛դցդ, թէ զ՛այ և զս՛րյ Աթ՛ոյս, և զմեր ծերու՛թե օրհնութի՛ն
կսիրէք՝ պ՛րտիք հն՛գնդիլ հր՛մնց Հօրն ձերոյ մեծի վ՛րդպին՝ և
ա՛մ մեծ՛մ՛ծց տե՛ղյդ մեր բրկ՛մցն բ՛րի կ՛մցն և խրհ՛րզն կրկին
պ՛իրեմ. և այլ ա՛մ վր՛դպց և նորընծ՛յից՝ և պ՛շտօնէիցդ՝ կրկին
զայս օրհնութին ընծ՛յեմ փն՛ւնդ իմ գգ՛պր տրց՛ւին, տնօ՛րնկն
տեաւր՛ցն տպ՛լ հոգս արէք վ՛ս ա՛յ, և՛այդ գրաւերիդ լաւ
ազաթ անէք, զի պրծ՛ց իւրն թէ կգրեմ որ քեզ լաւ մտիկ անեն,
և զի պրծ՛ց թէ զգիրս շ՛ւտով կհս՛ւցնեմ, զոր ա՛ծ յաջողէ ամէն:

Մեր բրկ՛մ ե՛մցի Տիգրաւար Ֆազլտին աղային ի մէնջ շատ
բարև անէք, և ասիցէք իւրն թէ զքո քաղցր բրկ՛մ Հանայն՝
յր՛ժմ բ՛րվ գաս՝ այլ ոչ տե՛սնես, ոհ գլխ՛յս. և ի քէն խնդրեմ
Պետ իմ զի լաւ տիրութի դմա առնի՛ցս, վ՛ս սիր՛յ որդ՛յն մեր՛յ,
զի յոյժ բրկ՛մ էր նմա. ծեր բէիզ վրդ՛պն այլ՛վք եղբր՛ք զողջոյն
սիրոյ քեզ ընծ՛յեն և ասեն յ՛այ մխիթ՛րիս գլուխդ պ՛յծո ողջ
կացցես:

վ՛ս ա՛յ Պետ իմ զղաւթիոյ զք՛ռսն՛ցն որ վ՛ս ց՛նկլի որդ՛յն
մերոյ գ՛րցի ի վերոյ՝ չմո՛ռնս՝ տաս կտ՛րել աղչեմ:

Սէր իմ զայս զիր զանխուլ քեզ գ՛րցի և գու ումեք սաստի
կ՛մ մեղ՛դրնց զիր աստ մի գրեր, բաց ի մխթ՛րնց և ի յորդ՛րնց,
զո՛պն տան քո իմն՛լ վ՛ս գրցի քեզ զի զ՛ամ իմ՛սցիս, բ՛յց կրկին
գրեմ. այլ զգիրդ ի՛նչ անեմ, զքո բարով գալդ խնդրեմ մինչ յ՛այ
եմ զի տեսից և գոնէ օրհնե՛լ ձեռօքդ՝ զհողս հողոյ հողոյ տայցես,
զի խղճուկ ձագուկն ախ պապաս չեկաւ որ տեսեր էի աս՛վ հէս-
ր՛թվ ել յ՛այ և նա զի ունէր զմխիթ՛րութի ոչ սկ՛ւ և զայս ասէր՝

ես եղկելիս և սգով պճրելս զինչ ասցից, մտաքդ խրհնց, և մի մեղգրեր. ահա հարկց գիր մի գրցի և ը գրոյս յղցի, թէ պիտոյ է՝ յայտնեա՝ և թէ ոչ՝ դու գիտս և կրկին ի տ՛ր ողջ լեր՝ պմէն.

Հասցի.

Ի Ստամպոլ՝ ի ձեռն Տ՞ն Յիլանու Ա՞ծրն վրդպին և մեծի Պատրիարքին՝ զի բցել ընթրցցի ա՛ռնձին, անբաց յումեքէ հսցէ ի բարին:

Ծառ ընդ յի երէն:

Վէս մահւովան աթոռակալ հեննէ վրդպտին.

Քահանաների վարձատրութիւնը Ժ. (?). դարում: Այս հատուածն առնուած է № 2511 Ձեռագրից, 377ր: Զ-ը Եսայի Նչեցու նշանակելի մեկնութիւնն է, կատարուած «ի թվիս հայկազեան տոհմիս տովմարի, ըստ հոլովման ամաց և թն հարիւր յիսուն և երկուց» (375ա), ուրեմն 1303 թուին: Գրիչն է ոմն Յոհանէս, որ գրել է «հոգևոր ս՛ր հայր Ստեփանոս»-ի համար: Ապա գնում է ոմն կոշկար Յովհաննէս և նուէր է տալիս «ի դուռն ս՛ր Յակոբի, որ կոչի Կապոսի», հաւանօրէն Երզնկայի մօտ, ինչպէս երևում է յիշատակարաններից: Սոցա տակն է գրուած անմիջապէս Մաղաքիայի կանոնական կարգադրութիւնը «ուխ» թուից առաջ, երբ Զ-ն ընկնում է Տիպրիկի կիւրղի անապատը: Այս վերջին յիշատակարանի թանաքը կեղտոտել է նախընթաց երկու յիշատակարանի գիրը, ուրեմն և գրուած են վերոյիշեալ թուականից առաջ: Ապա ոճժր թուին, երբ Յակոբ կաթողիկոսը Էրզրումի վերայով երուսաղէմ էր գնում, Բերիացի ոմն Նիկողայոս՝ նոյն քաղաքում նուիրում է կաթողիկոսին և, երևի, այդ ժամանակից էլ գտնւում է էջմիածնում:

Այս տեղեկութիւններից պարզ է, որ Մաղաքիան ապրում էր 1303 թուից յետոյ և 1596 թուից շատ տարիներ առաջ, երբ արտագրուեց Մաղաքիայի թուղթը այս Ձեռագրում: Այս շրջանի մէջ՝ Արևելեան Հայաստանում՝ Մաղաքիա անունով յայտնի վարդապետը Խրիմեցին է, Հայոց եկեղեցու մեծ ախոյեաններից մէկը Ունիթոսների դէմ, Երնշակի Ս. Կարապետի սորոգողը, Յոհան Որոտնեցուն՝ իւր ուսուցչին՝ այնտեղ վարժապետ կարգողը: Նա մեռաւ 1384 թուին ըստ Ալիշանի* բայց ամենայն հաւանականութեամբ 1383 թուին պիտի նշանակել նորա մահը: Նա մեռել է Որոտնեցու մահուանից երեք տարի առաջ**. իսկ Որոտնեցին վախճանուել է ՊԼԵ (=1386) թուին, (Երուս. Ձեռ. № 173.

* Սրտուան. 556, 578.

** Թովմա Մեծոփեցի. Շահնազարեանցի ճրատ. եր. 47.

յիշատ.) որով և Մաղաքիայի մահը 1383 թ. կընկնի: Եթէ ճիշդ է մեր ենթադրութիւնը այս կարգադրութեան հեղինակի մասին, ապա ուրեմն ԺԴ դարու երկրորդ կիսու մի փաստաթուղթ ունինք, թէ ինչ վարձատրութիւն էին ստանում հայ քահանաները Երնջակի կամ Սիւնեաց շրջանում*:

377թ. Ի գթութեցն ա՛յ և ա՛մ սրբոց ն՛ր, նայե ի Մաղաքէ վրդ՛պտէս հասցէ գիր ա՛հութե՛ և պահպանութե՛ ա՛մ հօտտեացե՛լ ք՛րստոնէից: Որ կանոնգիրքն տ՛է զի էրիցական հախն և իրօունքն այս է.

ա) զատկին խաչհամբուրն. զ՛. ըս՛տկ.

բ) գերզմահենք. բ. բ. ը՛սկ.

գ) տունահեն. բ. բ. ը՛ս.

դ) աղչկան պսակդրամն. լ՛է. ը՛ս.

ե) կտրճին. Ժ՛ե. ը՛ս.

զ) նշանահենք. զ՛. ը՛ս.

է) կնքադրամն. զ՛. ը՛ս.

ը) մեծ մ՛րդոյն հողադրամն. Ժ՛բ. ը՛ս.

թ) փոքրին. զ՛. ը՛ս,

ժ) հոգոյ մորթածին և մատղին կաշին և մորթին և երին.

Ժա) զմեռելին զանձինն հալօն և զնեքենոցն և զվրանոցն տայք ի ձեր քհն՛յն, որ զ՛ամ կարգ և կրօնք յաւժ ըութ՛ք կ՛տրեն:

Ով որ հնա՛ղնդի, ա՛հլ հղիցի ի մէնջ և անհն՛դդ՝ կպե՛լ և եղիցին բանին ա՛յ: Բօէ:

Տրդատի յունադեմ արձանագրութիւնը.— Պրով. Մառի յանձնաբարութեամբ 1908 թ. ուշ աշնանը գնացել էինք Բաղ-Ապարանի կամ հին Քասախի եկեղեցին ուսումնասիրելու: Մի գիւղացու դրան առաջ նկատեցի մի մեծ որձաքար՝ մի երեսին յունարէն արձանագրութեամբ, Հետեւեալ գարնանը պրով. Մառի նախկին աշխատակից պ. Տիխոնովի հետ կրկին գնացինք եկեղեցին և արձանագրութիւնը լուսանկարելու և հափազրելու: Արձանադրութիւնը Տրդատ անունով մի հայ թագաւորի էր. լուսանկարի հետ ուղարկուեցան և էստամբուլներ, իսկ քարը փոխադրուեցաւ Մ. Աթոռի թանգարանը: Պրով. Բոստովցեւը պ. պ. Մառի և Սմիռնովի աշակցութեամբ 1911 թուին հրատարակեց արձանագրութեան ու-

* Մաղաքիա անունով մի եպիսկոպոս ԺԵ. դարում (1440 թ. տ. Կոլոտ Յովհ. պատր. Լր. 448) հովւում էր Խրիմի հայոթիւնը:


սուսնասիրութիւնը «Անւոյ շարքի» մէջ*։ Պատրաստուում է և հայերէն թարգմանութիւնը, որ պրոփ. Մառի ցանկութեամբ կհրատարակուի նոյն շարքում։

Բոստովցիւր արձանագրութիւնն այսպէս է վերծանում. Τριδάτη[ς ὁ] | μέγας μεγ[α]λ[ης] | Ἀρμενίας βα[σι] | λεὺς ἔδοχεν (sic!) Γε...τῶν(?) Γυντ[ου] | νήη Ποδομί[του] (կամ Ποδομίθρου) | υἱῷ εἰς αρτα... | .α πόλιν Νίγη[ν] (կամ Νίγη[νόν] կամ Νίγη[νήν] φεβράρις KX... |

Թարգմանութիւնն է. Տրդատ մեծ մեծին Հայաստանի թագաւոր տուեց Բողոմիստի (կամ Բողոմիթրի) որդի Գնթունի Գե...ծիւնին (անունը եղծուած) εἰς αρτα*... | .α (և) Նիգը. փետրուար, KX (եղծուած տարեթիւը)։

Արձանագրութիւնը Բոստովցիւ համարում է ոչ Տրդատ Ա-ի, ներոնի ժամանակակցի, այլ Տրդատ վերջինի կամ քրիստոնեայի, ի նկատի ունենալով գրերի ձևը և թուականը (մասամբ եղծուած և երկրայական)։ Ինչպէս էլ լինի, սա հնագոյն գրաւոր յիշատակաւորանն է հայ թագաւորներից մնացած, որ գտնուած է Հայաստանում, չհաշուած դրամները։

Գաւթգին վարդ.



* Պրոփ. Բոստովցիւր թարգմանուած եւ եղծուած բառը համարում է յատուկ անուն՝ քաղաքի կամ աւանի, իսկ Սմիրնովը հասարակ անուն, որով պարզեւի նպատակն էր որոշուած եւ կարողում է εἰς ὀρτα[ρι]α—կոշիկ համար։ Պրոփ. Մառը հնարաւոր է համարում կոշիկ իմաստով, բայց որպէս իրանական տեքմինի մնացորդ եւ ոչ բուն յունարէն։ Վրացերէնի մէջ պահուած է աղտաւ-ի բառը, որ կապ, փաթոյթ է նշանակում, ուրեմն եւ կարող էր ոտքի փաթոյթ, կոշիկ նշանակել։